

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

(ՆՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ)

Այս տարի Հայ ժողովուրդը տօնախմբեց ծննդեան 100ամեակը մեր մեծագոյն երգահաններէն՝ Աղեքսանդր Սպենդիարեանի, որ այնին ներդաշնակութիւններ ստեղծեց, ապրեցաւ իր ցեղին ոգիով եւ պատգամ բռնուց իր սրտին ազնուութիւնը՝ երգը։ Հայաստանէն մեր Խմբագրութեան առաքուած այս վերլուծական յօդուածը իր խնամքով եւ լուրջ պարունակութեան համար, կը ծանօթացնենք մեր ըմբերգողներուն, անմահացնելու համար յիշատակը մեծ երաժշտագէտին։

Հայ երաժշտութեան պատմութեան մէջ 19րդ դարի երկրորդ կէսին եւ 20րդ դարի սկզբը բացւեցաւ մի նոր դարաշրջան։ Սկսում է ազգային նուազահանութեան գորոցի ստեղծման խիստ կարեւոր յեղաշրջումը, որ կապւած էր երաժշտական զարգացած սեռերի ու ձեւերի իւրացման, ապդային հմբքի վրայ եւրոպական առաջաւոր երկըների բարձր երաժշտական մշակոյթի փորձի լայն օդտագործման, ստեղծագործական սկզբունքների ու մեթոսների, արտայայտութեան միջոցների կիրառման հետ։ Այս յեղաշրջումը սկսւեց կ. Պոլսի հայկական դաղութում։ Գարբիէլ էրաննեան, Եղիա Տնտեսեան, Տիգրան Զուխանճեան – ահա այն երաժշտութիւնը, որոնք ձեռնամուխ եղան ազգային երաժշտութիւնը նոր ուղիով զարգացնելու գործին։ Առանձնապէս մեծ էր Զուխանճեանի նշանակութիւնը, որի չնորդիւ հայ երաժշտութեան մէջ ներմուծւեց թատրերզը (opera) եւ պատմական–ուժամնանդիկական, կոմիկական, կախարդա–պատկերային սեռերը։ Ասկայն քիչ թէ շատ նպաստաւոր պայմանները, որ ստեղծւել էին թուրքիայում հայ մշակոյթի զարգացման համար, երկար չտեւցին եւ 80ական թականներից հայ երաժշտութեան յետազայ զարդացումը փոխադրւեց Արեւելեան Հայաստան եւ Ռուսաստանի հայ օջախները։ Առաջիկ եկան Քրիստոնութիւնը Կարա–Մուրզան, Մակար Եկմալեան, Գենարիոս Ղորղաննեան, Նիկողայոս Տիգրաննեան, որոնք իրենց բեղմնաւոր գործունէութեամբ հող նախապարաստեցին Կոմիտասի համար՝ ազգային երաժշտութիւնը ժամանակակից դասական արևեստի մակարդակին բարձրացնելու համար։

Արդէն 20րդ դարի սկզբին հայ երաժշտութեան մէջ ստեղծւել էին առաջին թատրերգները, երգերը դաշնամուրային նևազակցութեամբ, վիպերգներ (romance), բաղմաճայն մշակումներ երգչախմբի համար, դրւել էր դաշնամուրային գրականութեան. Հիմքը: Անհրաժեշտ էր զարդացնել երաժշտական արևստի եւ այլ բնադաւառները, յատկապէս համանւագրային (symphonique) երաժշտութիւնը, ուր հայ նևազահանները դեռևս նախական համեստ փորձերից այն կողմէ չէին դնացել (Զուխաճեան, Սինանեան): Ազգային դասական համանւագրային երաժշտութեան ստեղծումը, որ ժամանակի հրաժայական պահանջներից մէկն էր, կապւեց Ալ. Սպենդիարեանի անւան հետ: Սպենդիարեանի վաստակը մեծ է նաև վիպերգի եւ առանձնապէս թատրերգի զարդացման ասպարիզում:

\* \* \*

Ալեքսանդր Աթանասի Սպենդիարեանը ծնւել է 1871ի Նոյեմբերի 1ին (Հոկտեմբերի 20ին), Տաւրիկեան գաւառի (այժմ Ռուկրախնական ՍՍՀ, Խերսոնի շրջան) Կախովկայում, վաճառականի ընտանիքում:

Սպենդիարեանների հինգ զաւակներից (երեք դուսար եւ երկու մանչ զաւակ) բազմազան ընդունակութիւններով օժտածը Ալեքսանդրն էր: Դեռևս երեք տարեկան էր, երբ թղթից նրա պատրաստած զանազան կենդանիներն ու թռչունները գրաւեցին մեծահամրաւ նկարիչ Յովլ. Այլվազովսկու ուշադրութիւնը: Քիչ ուշ նա նկարում է եւ գրում բանաստեղծութիւններ: Սակայն առաել ցայտուն օժտածութիւն նա երեւան է բերում երաժշտութեան ասպարէզում: առաջին ստեղծագործութիւն՝ վայր դաշնամուրի համար, նա դրել է եօթը տարեկան հասակում:

Սկզբում նա սովորել է դաշնամուր նևազել, իսկ որոշ ժամանակից յետոյ՝ ջութակ, որը եւ իխովին կլանել է նրա ուշադրութիւնը, ես մզելով միւս արևստները: Երաժշտութեան նախընտրութեան հարցում հաւանաբար քիչ դեր չի խաղացել նաեւ այն հանդամանքը, որ Սպենդիարեանների ընտանիքում երաժշտութիւնը մեծ տեղ էր գրաւել՝ մայրն ու մօրաքոյը նւագել են դաշնամուր, իսկ մօրեղբայրը՝ ջութակ: Նրանց տանը յաճախ է հնչել ժողովրդական կատարողների նւագը:

Զնայած Ալեքսանդրի երաժշտութեան մէջ ունեցած յաջողութիւններին, ծնողների հետ միասին ասպարայ երաժանն էլ չէր ժամանում երաժշտութեան մէջ մասնագիտանալու մասին: Սիմֆոնիկովում գիմնազիան աւարտելուց յետոյ (1890ին), նա մեկնում է Մոսկաւ, ընդունում համալսարանի բնագիտական բաժինը: Մէկ տարի անց՝ փոխադրում է իրաւաբանական բաժին, որը եւ աւարտում է 1895ին:

Մուկւայում Սպենդիարեան սերտ կապեր է հաստատում հայ մը-  
տառականութեան առաջադէմ ներկայացուցիչների հետ։ Յաճախ  
լինում է Մուկւայի համալսարանի իրաւաբանական բաժնի պրոֆե-  
սոր Ն. Ներսէսովի տանը, ուր ամէն կիրակի հաւաքւում էր հայ ու-  
սանողութիւնը։ Այստեղ է նա ծանօթացել բանաստեղծ Ալ. Ծատուր-  
եանի, յետպագյում յայտնի գրականագէտ Ա. Զիվիլեդուլի, նկարիչ  
Վ. Սուրէնեանցի եւ շատ ուրիշների հետ։ Ներսէսովի տան հաւա-  
քոյթներում քիչ տեղ չէր տրուում արևեստին։ դրա լաւագոյն արտա-  
յայտութիւնը Ծատուրեանի գողոտրիկ բանաստեղծութեան եւ նրա հի-  
ման վրայ Սպենդիարեանի «Ել վարդ» երգի ստեղծումն է։

Համալսարանական տարիներին Սպենդիարեանի սէրը երաժշտու-  
թեան նկատմամբ չի թուլանում։ Նա շարունակում է ջութակի պա-  
րապմունքները, նւազում ուսանողական համերգային նւազախըմ-  
բում՝ կատարելով զեկավարի պարտականութիւնները, ինչպէս նաեւ  
յօրինում է զանազան ստեղծագործութիւններ՝ քայլերգներ, պարեր,  
վիպերգներ։

Սպենդիարեանի ապագայի համար մեծ նշանակութիւն ունեցաւ  
նրա հանդիպումը ուսւ երգահան Ն. Կենովսկու հետ, որը համա-  
լսարանի ուսանողական համերգային նւագախմբի վարիչն էր։ Լսելով  
Սպենդիարեանի քայլերգներից մէկը, նա համազում է նրան լրջօրէն  
զրադել ստեղծագործութեամբ։ Կենովսկուն զարմացրել էր Սպեն-  
դիարեանի երաժշտական ձեւի ու ճայնատարութեան բնածին նուրբ  
գլացողութիւնը։

Սպենդիարեան երկու տարի սովորում է Կենովսկու մօտ (1892-  
1894), ապա, վերջինիս խորհրդով, համալսարանն աւարտելուց յե-  
տոյ, մեկնում է Գետերբուրգ ու դառնում նշանաւոր երգահան, մեծ  
մանկավարժ ու տեսարան Ն. Ռիմսկի-Կորսակովի աշակերտը։ Ինք-  
նակենսագրութեան մէջ Սպենդիարեանը դրում է։ «Մինչեւ Ռիմսկի-  
Կորսակովի հետ ծանօթանալս, չնայած Կենովսկու եւ մի քանի այլ  
երաժիշտների գովեստներին, ես համոզւած չէի, թէ արդեօք ունեմ  
բաւարար չափի տեսալներ, որպէսզի ինձ լիովին նւիրեմ ստեղծա-  
գործական գործունէութեան, եւ բոլորովին անտեսեմ իմ համալսա-  
րանական իրաւաբանական կրթութիւնը։ Միակ երաժիշտը, որին ես  
կարող էի վստահել այդ հարցի լուծումը... Ռիմսկի-Կորսակովն էր՝  
այն ժամանակ արդէն իմ ամենասիրելի կոմպոզիտորը»<sup>1</sup>։

Սպենդիարեանը Ռիմսկի-Կորսակովի հմուտ ձեռքի տակ ձեւա-  
կերպւում է որպէս երաժշտական լայն հորիզոնի տէր, նւագահանի  
բարձր քենցիթին տիրապետած արևեստակէտ։ Ռիմսկի-Կորսակովը  
բարձր էր գնահատում իր աշակերտին եւ որպէս օժտաւծ երաժշտի,

1. Գ. Տիգրանով, Ա. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ. Հայոցեանատ, 1953, էջ 174 (ռուսերէն)։

եւ որպէս ամբարիք, ազնիւ հոգու տէր մարդու, եւ միշտ ուրախ էր նրան իր տանը տեսնել, ուր, ինչպէս պըռոՓ. Ա. Օսաովսկին է գրում՝ «... այցելուների թիւը սահմանափակւած էր ինիստ ընտրութեամբ»<sup>2</sup>:

Սպենդիարեան Պետերբուրգում նոյնպէս գտնւում է առաջաւոր մտքի տէր մարդկանց շրջապատում, որոնց թւում էին նշանաւոր քըննաղատ Վ. Ստասովը, երդահաններ՝ Ա. Գլազունովը, Ա. Լեազովը եւ ուրիշներ:

1900ին Սպենդիարեանը գրում է իր առաջին համերգային խոչոր գործը՝ «Համերգային նախերգանքը», որով եւ աւարտում է իր պարապմունքները Ռիմսկի-Կորսակովի մօտ։ Ետեւում են ուսուցման տարիները՝ երգահանի ստեղծագործական վաղ շրջանը. նա վիպերգների, ջութակի, դաշնամուրի ու թաւջութակի կտորների, համերգային երկերի («Մենուէտ», «Հինաւուրց պար», «Օրօրոցային») հեղինակ է : Ճիշտ է, բայց մէջ նւագահանի անհատականութիւնը գեռնեւս մեծ չէ, բայց նրա ոճի մի քանի բնորոշ գծերը (լուսաւոր կերպարների գերիշխում, տրամադրութիւնների արտայայտման անմիջականութիւն, մեղեղայնութիւն, երաժշտական ձեւի ու ձայնատարութեան յստակութիւն) արդէն երեւան են դալիս։ Որոշ ստեղծագործութիւններ ունեն գեղարվեստական այնպիսի մակարդակ, որ մինչեւ օրս էլ չեն կորցրել իրենց ներդորութեան ոյժը։ Ակնառու օրինակը «Այ վարդ» երդն է, որ դասւում է հեղինակի լաւագոյն երկերի թւին։

\* \* \*

1901-1917 թւականներն ընդգրկում են Սպենդիարեանի կեանքի ու գործունէութեան միջին շրջանը, երբ երաժիշտը ապրում է իր ստեղծագործական հասունութեան մէջ, հաստատում է նրա ինքնուրոյն ոճը, խորացում են գեղադիմական սկզբունքները։

Այս շրջանը զուգադիպում է Ռուսաստանում հասարակական, քաղաքական ու գեղարվեստական կեանքի ամենաբարդ ու հակասական տարիների հետ։ Մայրագոյն լարաւածութեան հասած դասակարգային պայքարի հետեւանքով երկրում ստեղծւած քաղաքական շիկացած մթնոլորտն իր արտայայտութիւնը ստացաւ նաեւ արեւստում, հարստացնելով այն նոր թիւմաներով, գաղափարներով ու կերպարներով։

Սպենդիարեանը, լինելով առաջադէմ հայեացքների տէր արեւստագէտ, չէր կարող շրջանցել ժամանակի յուղող հարցերը։ Երգահանի ստեղծագործութեան մէջ լայն հոսանքով մուտք է գործում գաղաքացիական թիւման, իր հետ բերելով բողոք ընկերվարական անհաւասարութեան ու ցասում բռնակալութեան դէմ, հայրենասիրա-

2. Ժամանակակիցները Ալ. Սպենդիարեանի մասին, Երեւան, 1960, էջ 29:



Ա. ԵՐԱՍՄԱՆԴԻ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ, 1890ին

կան պայքարի պարու եւ լուսաւոր ապագայի երազանք, քաղքենիս-  
կանութեան մերկացում եւ ազնիւ միտումների գովերգում : Բովան-  
դակութեան նման հարստացումը, անշուշտ իր կնիքն է գնում երա-  
ժբառութեան բնոյթի վրայ . կենսուրախ տրամադրութիւններով առ-  
կայծուն կամ քնարական չնչով յափեցած բազմաթիւ էջերի կողքին  
տեղ են դուռում հաստատակամութիւն ու կորով արտայայտող, տրա-  
մային մեծ լարածութիւն ունեցող էջեր :

Սպենդիարեան՝ ուսումնառութիւնն աւարտելուց յետոյ, ստեղ-  
ծագործելու բուռն ցանկութեամբ առցում, վերադառնում է Հրիմ՝  
ապրում եալթայում, Սուդակում :

Սպենդիարեանն իր բացառիկ օժտածութեամբ, անձնական մեծ  
հմայքով, ընկերասիրութեամբ իրեն էր ձգում բոլոր նրանց, ովքեր  
առիթ էին ունենում շիւելու նրա հետ : Շնորհիւ դրան, անոր Եալ-  
թայի տունը շուտով գառնում է քաղաքի մշակութային շարժման  
կենտրոնը, ուր իշխում է գեղարքւածական բարձր մթնոլորտ : Այս-  
տեղ լինում են գրողներ Մ. Գորկին և Ա. Չեխովը, երգահաններ՝  
Ա. Գրագունովը, Յ. Կիւին, Ամանին, Մ. Իսպովիտ-Խվանովը, հրո-  
շակաւոր երգիչ Ֆ. Շալեասկինը, գաչնակահար և վարիչ Ֆ. Բլիւ-  
մենֆելդը և շատ ուրիշներ :

Հրիմում Սպենդիարեան ծաւալում է հասարակական ու կատա-  
րողական լայն գործունէութիւն, որ մեծապէս նպաստում է տեղի ե-  
րաժշտական կեանքի աշխուժացմանը :

1903ին նախազանը առաջին անգամ կանգնում է նոտակալի առ-  
ջեւ և մեծ յաջողութեամբ զեկավարում իր «Դրիմի էսքիզները» (ա-  
ռաջին սովորություն), իսկ 1906ին հանգէս է գալիք Պետերբուրգում «Երեք  
արժաւելները» (ըստ Լերմոնտովի) համերգային պատկերի կատար-  
մամբ : Յատկապէս մեծ նշանակութիւն ունեցաւ Պետերբուրգի ելոյ-  
թը, որ ճանապարհ հարթեց երգահան և վարիչ Սպենդիարեանի  
առջեւ : Յետապայում նա յաճախ ելոյթներ է ունենում Պետերբուր-  
գում և Մուսկայում, ապա հրաւէլներ է ստանում Ռուսականից, Խար-  
կովից, Օդեսայից և այլ քաղաքներից, ուր կատարում է իր ստեղ-  
ծագործութիւնները :

Սպենդիարեանի միջին շրջանի ստեղծագործութիւնը աշքի է  
ընկնում արծարծած թեմաների ու օգտագործած տեսակների բազմա-  
զանութեամբ : Նա գրում է վիպերգներ, ձայնական խմբերզներ, դաշ-  
նարտասանութիւններ, երգեր, համանւագային երկեր : Մասնաւում է  
թատրերգի մասին, չմոռնալով յատկապէս Ռիմսկի-Կորսակովի խոր-  
հուրդը՝ զրել անպայման «օպերա» արեւելեան խորքով : Սպենդիար-  
եան տենդագիքն կերպով նիւթ է որոնում, պատւիրում է գրքոյիներ  
(լիբրետոններ), սկսում է աշխատել «Շամբրամի» վրայ, գրում է եր-  
կու հառւած և գրանով սահմանափակում : Յետապայում, մի առի-

թով, նա ասում է երգահան Ն. Տիգրանեանին. «Ես երազում էի հանդիպել այնպիսի ազնիւ թեմայի, ինչպէս «Խվան Սուսանինը», «Խշան Իդորը» կամ «Կիտէֆը», միայն թէ կապւած Հայաստանի պատմութեան հետ, իմ ժողովրդի կեանքի ու հերոսական պայքարի հետ, ևս ձգտում էի գտնել այնպիսի գրական երկ՝ որ բաւարարելով այդ պահանջները, միեւնոյն ժամանակ հեշտութեամբ երաժշտականացէք»<sup>3</sup>: Երգահանը թատրութիւնով դեռևս զորով էր իր վաղեմի իզգը իրականացնելու հնարաւորութիւնից: Գտնած չէր ցանկացած գրական երկը, ուստի նրա ստեղծագործական նւաճումներն այս շրջանում կապւում են վիպերգի եւ յատկապէս համանւագային երաժշտութեան հետ:

Սպենդիարեանի կապը ժամանակաշրջանի յուզող հարցերի հետ առաւել չափով երեւան է զալիս ձայնի համար գրւած երկերում: Արդէն իսկ առաջին երկերից մէկում՝ «Չերկւած չերտիկը» եղերերդութեան մէջ (Ն. Ներկրասովի «Խօսքերով»), գրւած երդչախմբի, մեներդչի (բամբ) եւ համերգային նւաճախմբի համար (1902 թ.), արձարծւած է ընկերվարական բողոքի գաղափարը, ցոյց է տրւած ուսուդեղուկի տնտեսական ծանր, անելանելի վիճակը: «Օդիմանդիք» վիպերգի (Խօսք Շելլի) թեման է միահեծան իշխանութեան մերկացումը, նրա անխուսափելի կործանման կանխագուշակումը, մի նիւթ՝ որ 20րդ դարի սկզբից արժանացել է Ռուսաստանի առաջաւոր մտաւորականութեան սեւեռուն ուշադրութեանը: Մուս-ճապոնական պատերազմը ծնունդ տվեց «Սպասում» երգին (Խօսք Ս. Գորենիչեն-Կուտուզովի), ուր տրւած են մտորումներ հայրենիքի ծանր վիճակի մասին: Ձգտումը դէպի լուսաւոր ապագան, դէպի երջանիկ կեանքը առանձնակի շեշտածութեամբ արտայայտում է «Արեւելեան առասպելը վիպերգում» (Խօսք Ս. Մարշակի) եւ «Դեկելվէյ» (Խօսք Ս. Գորենու): Եղանակաւոր արտասանութեան մէջ՝ Սպենդիարեանին հետաքրքրում է նաեւ քաղքենիութեան մերկացման նիւթը, որին է նկրւած «Ջինորսն ու փերին» բալլարը՝ նազահանի ստեղծագործական հասունութիւնը հաւասարող առաջին գործերից մէկը:

Բալլարի բնադիրը Գորկու «Փողքիկ փերին եւ երիտասարդ հովիւը» պոէմի մի մասն է կազմում: Գորդը այդ հատւածը առանձնացնում է յատկապէս Ալ. Սպենդիարեանի համար, եւ պոէմի գաղափարը՝ քաղքենիների գորշ կեանքի մերկացումը աւելի եւս սըրելու նպատակով՝ աւելացնում է բարոյախօսական բովանդակութեան վերջաբան: Սպենդիարեանը Գորկու մասին իր յիշողութիւններում հետեւեալն է գրում. «Մէկ անգամ Գորկին մեղանորի ժպի-

3. Գ. Ցիգրևսով, Ալ. Աֆ. ՍՊԵՆԴԻԱՐԵՎ, Պետ. երաշտ., Հրատ. Մոսկա, 1953, էջ 173 (ռուսերէն):

տով ասում է ինձ. «Ահա գիտէք ես ոտանաւոր չեմ գրում... Միեւնոյն է, Պուշկինի նման չեմ գրի, իսկ գրել աւելի վատ, կը նշանակէ վիրաւորել Պուշկինի յիշատակը: Պուշկինը երկու հարիւր տարի առաջ գրել է բոլոր ուսւ բանաստեղծների փոխարէն... եւ, այդուհանդերձ, մեղք եմ գործել բանաստեղծութեամբ. գրել եմ «Զկնորսն ու փերին» փոքրիկ պոէմը... մի զուցէ ձեզ պէտք կը գայ երաժշտութեան համար»:

«Զկնորսն ու փերին» բալլադը դրւած է համերդային նւագախմբի համար: Հեղինակը ստեղծում է տպաւորիչ երաժշտական կերպարներ, ճշմարտացիօրէն բացայայտում է բնադրի բովանդակութիւնն ու դաշտափարը: Համեմատելով բալլադը նրան նախորդող երկերի հետ, համոզւում ենք, որ նրանում երգամասը աւելի արտայայտիչ է ու ճկուն, ներդաշնակ լեզուն աւելի հարուստ է, նւագակցութիւնը զգալիօրէն ինքնուրոյնացւած, գործիաւորումը հետաքրքիր:

Բալլադը կատարւում է Պետերուրդում (1903 թ.) մեծ յաջողութեամբ:

Սպենդիարեան ստեղծում է նաեւ մի շարք քնարական երգեր ու վիպերգներ, որոնցում արտայայւած են սիրոյ ջերմ զգացմունքներ կամ, բնութեան ներգործութեան հետեւանքով առաջացած, բանաստեղծական յոյզեր, փիլիսոփայական մտորումներ («Լուսին», խօսք Շելլի, «Երազել եմ քո սէրը, Հոգիս իմ, յաճախ», խօսք Ս. Նազարովի): Սիրոյ թեման արծարծում է հիմնականում Արեւելքի հետ կապւած վիպերգներու («Ես քեզ կը համբուրէի», խօսք Ռ. Մէյի, «Խնդացիր, ով սիրտ իմ սոխակ», խօսք Հաֆըզի, «Հաֆըզի երգը», «Հաֆըզից»):

Ցիշուած բոլոր երգերն ու վիպերգները գրւած են ուսւական վիպերգի եւ յատկապէս Ռիմսկի-Կորսակովի ազգեցութեան տակ: Սակայն, սրանց կողքին ստեղծուում են երգեր ու վիպերգներ, որոնց մէջ տեղի է ունենուում երգահանի ազգային ոճի ճեւակերպման ընթացքը: Այդ նշանակալից երեւոյթը իրագործում է հայ բանաստեղծների բնագիրներով դրած երկերում եւ սկսում է գեռեւու նւագահանի ստեղծագործական վաղ շրջանում՝ «Այ վարդ» վիպերգում եւ «Արեւելքան օրօրցային երգում» (խօսք Ռ. Պատկանեանի), ապա շարունակում է միջին շրջանում՝ «Այնտեղ, այնտեղ, դէպ վեհ այն դաշտը» (1910-1914) հերոսական երգում, «Այ Հայստան» համերգային արիայում (1915), ինչպէս նաեւ «Մի լար, բլուլ» եւ «Առ սիրուհիս» ժողովրդական երգերի մշակումներում: Բոլոր այս երկերում Սպենդիարեանց յենում է հայ քաղաքային երգի վրայ որ նրա աղդային լեզուի առայժմ միակ աղջիւրն է հանդիսանում:

Սպենդիարեան «Այնտեղ, այնտեղ, դէպ վեհ այն դաշտը» երգում, առաջին անգամ ժողովրդական երգի նկատմամբ կիրառում է համանւագային զարգացման սկզբունքը: Երկի հիմնական երաժշ-

տական նիւթը «Լոյս է արդէն» ժողովրդական երգի մեղեղին է: Դիմելով զասական երաժշտութեան մէջ մշակած զանազան միջոցներին, երդահանը ստեղծում է համերգային լարւած զարգացում: Դա հնարաւորութիւն է ընձեռում նրան՝ երկի ընթացքում մեղեղին կերպարանափոխել, վերիմաստաւորել: Եթէ առաջին մասում (երգը գըրւած է եռմասնեայ ձեւով) իշխում են վիշտն ու թախիծը, ապա երրորդ մասում նոյն մեղեղին ստանում է հերոսական, առնական բընոյթ եւ ճշմարտացիօրէն բացայայտում է բնադրին բովանդակութիւնն ու զազափարը:

Բնագրում, որ գրել է երգահանը, յենելով Խ. Արովեանի «Վէրք Հայաստանի» վէպի վերջաբանին վրայ, մի կողմէից յաւերժացուում է հայրենիքի համար զոհւած հերոսների պայծառ յիշատակը, տրւում են մտորումներ հայրենիքի ծանր վիճակի մասին, միւս կողմէից՝ պարգարելու մարտական կոչ է տրւում նոր սերնդի հերոսներին՝ հայրենիքը ազատագրելու: Այսպէսով, ստեղծագործութեան առաջին մասը իրենից ներկայացնում է սորյ քայլերգ, միջին մասը՝ քնարական ջերմ զեղում, իսկ երրորդը՝ հանդիսաւոր մարտական քայլերգ:

Սպենդիարեանին համակած հայրենասիրական զգացմունքները մի նոր թափով արտայայտուում են «Առ Հայաստան» արիայում: Այդ երկը ստեղծուում է 1915ի եղենի տպաւորութեան տակ: Երաժիշտը իր փոթորկւած հողեվիճակին համապատասխանող մտքեր եւ յոյզեր գտնում է Յովհ. Յովհաննիսեանի բանաստեղծութեան մէջ, որ գըրւած էր 1896ի հայկական կոտորածի (դարձեալ Թուրքիայում) առիթով: Յովհաննիսեանի բանաստեղծութեան հիմնական կերպարը ասպատակւած, գերւած Հայաստանն է, որ, սակայն, պիտի վերածնէր մոխիների տակից: Այստեղ միմեանց են յաջորդում փիլիսոփայական խորհրդածութիւններ, վշտի ու թախիծի զգացումներ, սրտի մորմոք, ապա եւ գալիք փրկութեան յոյս ու հաւատ: Երաժշտութիւնն էլ, որ սկզբում դիւցազներգական, խոհական շունչ ունի, անցնելով դարգացման արգեր փուլքը, յագենալով ներքին մեծ լարւածութեամբ՝ ստանում է յաղթական քայլերգի բնոյթ: Բանաստեղծութեան մէջ տրւած ամենատարրերը, յաճախ փոփոխւող յոյզերը բնականօրէն արտայայտելու համար Սպենդիարեան, բացի երգային ելեւէջներից, լայնօրէն կիրառում է նաեւ խօսքի արտասանութիւնից բխող ելեւէջներ եւ այդպէս ստեղծում է արտայայտիչ երգամաս:

«Առ Հայաստան» մեներգը, ինչպէս եւ «Այստեղ, այնտեղ, գէպ վեհ այն դաշտը երգը, իրենց ծաւալուն, զարգացած ձեւով, տրամային լլութեամբ, նւազակցութեան չափազանց ազդու դերով, համերգային մտածելակերպով, ինչպէս նաեւ երգամասի առանձին յատկութիւններով՝ նախապատրաստեցին «Ալմաստ» թատրերգի երաժշտական լեզուն:

Ինչպէս առեց, Սպէնդիարեանի երաժշտութեան ազգային ոճի ձեւակերպման հարցում մեծ դեր խաղացին նաև ժողովրդական երգերի մշակումները:

Ժողովրդական մեղեղին ներդաշնակելիս Սպէնդիարեան օդտագործում է պարզ միջոցներ, աշխատելով սուր հնարաւորութիւններով հասնել մեծ արտայայտչականութեան: Նա այդ անում է մեծ վարպետութեամբ, դրսեւորելով իրեն որպէս ժողովրդական երաժտութեան գիտակ: Խօսքը վերաբերում է թէ՛ հայկական, թէ՛ Դրիմի ձկնորսների, թէ՛ ուկրայինական, եւ թէ՛ սուսական ժողովրդական երաժտութեանը:

\* \* \*

Սպէնդիարեանի ստեղծագործական նւաճումները առաւել արգասաւոր են համանաւագային երաժշտութեան բնագաւառում: Այստեղ են ամէնից առաջ ի յայտ դալիս ու ձեւակերպւում նրա ոճական առանձնայտկութիւնները: Նա ունէք հնչէրանդային դոյներով մտածելու բնական հակում եւ համերգային նուագախմբի հարուստ հնարաւորութիւններին տիբապկելու հարցում շատ շուրջ հանում է վարպետութեան:

Սպէնդիարեան Ն. Ովմակի-Կորսակովի միջոցով իւրացնում է ուստական համերգային երաժշտութեան յատկապէս «Հզօր խմբակի»<sup>4</sup> երգահանների աւանդները եւ ստեղծագործարար կիրառում իր երկերում: Մեծ հետաքրքրութիւն է ցուցաբերում ժողովրդի կեանքին, սուրոյթներին, ձգում է երաժշտական երգապետութեան հարցում շատ շուրջ հանում:

Օգտագործելով ժողովրդական երգեր ու պարեր կամ յենեկով կենցաղում տարածւած այս կամ այն տեսակի առանձնայտկութիւնների (աղյոյ, քայլերգի, վարփի, եւ այլն) վրայ, երգահանը ստեղծում է կենցաղային վառ ու գունագեղ տեսարաններ, բնութեան բանաստեղծական պատկերներ, հոգեկան նրբին ապրումներ:

Համերգային երաժշտութեան նմոյշներ են «Դրիմի էսքիզներ» երկու վլիխներ, «Համերգային վալար», Ովմակի-Կորսակովի յիշատակին նեփրւած: «Սպոյ նախերգանքը» եւ «Կարիմ մարտիկներ» քայլերգը (կողակ-առագմական երգերի մեղեղիներով): Սրանից ամենատարածներն են «Դրիմի էսքիզներ», որոնցում օգտագործւած են թաթարական պարերի ու երգերի մեղեղիներ, իսկ երկրորդ սիլուսում նաև մուղամներից վեցցւած հատաւածները («Թաթարիմ» եւ «Սիրոյ երգ»): Երգահանը այս երաժշտական նիւթը զարգացնում է տար-

4. «Հզօր խմբակի» մէջ ժամանում են Մ. Բալակիրեր, Կիւին, Մ. Մուսորգսկին, Ա. Բորսոգինը եւ Ն. Ովմակի-Կորսակովը: Խորակ կազմակերպւել է անցեալ դարի 60ական թւականների սկզբին:



ԱՆԳԻՍԱՆԴՐ ՄՊԵՆԴԻԱՐԵԱՆ, 1897ին

բորակման սկզբունքով։ Շնորհիւ համահնչելուների ու նրանց գուգորդումների փոփոխման կամ նորանոր բազմերանք ձայների ստեղծման, իւրաքանչիւր անգամ կրկնելիս երեւան է դալիս մի նոր գծագրով, նոր գոյնով։ Շարադրական սրեւստի բոլոր միջոցները օգտագործում են ժողովրդական երաժշտութեան օրինաչափութիւնների հետ այնպիսի միտութեամբ, որ ստանալով մեծ զարգացում՝ մեղեդին չի դրկում ազգային բոյրից, չի կորցնում իր ոյժը։

Սպենդիարեանի երաժշտական ոճի հասունացման հարցում շատ մեծ գեր է խաղացել նաեւ Ձերեք արմաւենիներ» համերգական պատկերը։ Այս ծրագրային երաժշտութեան հիմնալի օրինակի հիմքում դրած է Մ. Լերմոնտովի հիմաքանչ բանաստեղծութիւնը։ Յայտնի է որ Լերմոնտովի ոճի ամենաբնորոշ գծերից մէկը բնութեան մարդկայնացումն է։ Նա յաճախ զինքը յուղող զաղափարներն արտայայտում է այլաբանութեան միջոցով։

«Երեք արմաւենիների» գաղափարը բանաստեղծին առաւել յուղոյ՝ մարդկայնական մրցումներուլ տուղորւած անհատի ողբերգական բախումն է իրականութեան դաժան ուժերի հետ, մի դաղափար, որ 20րդ դարի սկզբին նոյնքան արդիական էր, որքան եւ բանաստեղծի ժամանակաշրջանում։ Սակայն Սպենդիարեան, ենելով իր ժամանակական-քաղաքական հետաքաղաքական կենաքի պարուսից, բանաստեղծի բողոքի ձայնը՝ ուղղաւած ընդդէմ մարդու լուսաւոր ձգտումների ու ընչացման, հասցրեց ասման պոռթկումի։

Ինչպէս բանաստեղծութեան մէջ, այնպէս էլ համանւագային պատկերում, դոյութիւն ունի տրամադրական երկու գիծ՝ նկարագրական եւ Հոգերանական։ Հետեւելով բանաստեղծութեան ենթակայի զարգացմանը, երգահանը երաժշտութեան միջոցով պատկերում է անծայրածիր, տօթակէղ անապատն ու գեղատեսիլ ովասիսը (արմաւենիներով ու նրանց հովատուն ստւերի տակ ուրախ կարկաչող աղբիւրով), կարաւանի աստիճանական մօտեցումը, արմաւենիների կորատումն ու այրումը, հեռանան ու աւերւած, ամայացած ովասիսը։ Այս ամէնը երաժշտութեան մէջ ստանում է զարմանալի վառ արտայայտութիւն։ Բայց այս ստեղծագործութեան մէջ հիմնականը հողերանական գիծն է, իսկ գլխաւոր կերպարը՝ արմաւենիների կերպարը, որ մարմնաւորում է ստեղծագործութեան մարդկայնական դաղափարը։

Սպենդիարեանն էլ մարդկայնացնում է արմաւենիների կերպարը, հաղորդում նրան խոր յոյզեր ու ապրումներ։ Այդ է ապացուցում արմաւենիների բներդը, լայնաշունչ, հոգեթով մեղեդի, որը աստիճանաբար յագենալով ներքին լարածութեամբ, ձեռք է բերում տրամային բնոյթ, դառնում յուղումնալից։ Յոյց է տալիս, թէ ի՞նչպէս արմաւենիների զուսպ տրտունջը վերաճում է բուռն բողոքի ընդդէմ

ճակատագրի, որ գատապարտել է Նրանց անօգուտ գոյութեան: Սպենդիարեան բողոքի ձայնը պոռթկումնալից դարձնելու համար սաեղծում է նաեւ արմաւենիների կործանման բներդը, որ կերպարի զարդացման ընթացքում մեծ զեր է խաղում: «Երեք արմաւենիների» հիմքում դրամագաղաքը արտայայտում է երկու հակադիր կերպարների բախման միջոցով:

Յուրականութիւն արթնցնող Արմաւենիներու կարաւանի բներդը նկարագրական բնոյթ ունի: Այդ բներդը իր օօրըւող համբաքայլ կը սոյթով, զանգակների զօղանչով, հնէղութեան աստիճանական ուժեղացումով, նորանոր ենթածայներով խտացուղ հիւսածքով եւ դործիքների հարուստ երփներանդներով, վերին աստիճանի տպաւորիչ ու տեսանելի ձեւով ստեղծում է հեռւից մօտեցող կարաւանի պատկերը:

Համերգային պատկերում երաժշտութեան հետագայ զարգացումը տեղի է ունենում վերը նշանակ բներդների բարդ փոխ-յարարերութեան միջոցով:

«Երեք արմաւենիներ» համանւագային պատկերը Պետերբուրգում առաջին իսկ կատարումից յետոյ մեծ յաջողութիւն ունեցաւ: Ռուս ականաւոր երգահան Ա. Գլազունովը դրում է. «... հրապարակ եկաւ «Երեք արմաւենին»՝ մի ցատուն ստեղծագործութիւն, որ իսկոյն ընդհանուր ուշագրութիւն գրաւեց եւ մեծ հոչակ բերեց նրա հեղինակին... Սպենդիարեանն էլ յանկալի հիւր զարձաւ ականաւոր կոմպոգիստների ընտանիքում»:

«Երեք արմաւենիները» կատարեց նաեւ արտասահմանում՝ Միլանում, Բևուինում, Կոպենհագենում, Նիւ Եորքում, Լոնդոնում, Վիեննայում, Զաումում և այլուր: 1908ին, Հելվենիյում առաջին կատարումից յետոյ դեկավար մ. Կատանուսը գրում է հեղինակին. «Երեք արմաւենիները» այսօր կատարեցին փայլուն յաջողութեամբ: Զերկոմպոգիստին հանձարել է ու համարնչունք»:

1913ին Սպենդիարեանի երկը հնչում է բոլորովին այլ պայմաններում: Նշանաւոր ուսու բայեսի փարիչ Մ. Ֆոկինը, յափշտակած նապահանի երաժշտութեան ղեղեցկութեամբ եւ պատկերաւութեամբ, ստեղծում է «Ջինների թագաւորի եօթը գուստըրերը» բալետը, որի անդրանիկ բեմադրութիւնը կայացաւ Յունարի Յին և 4ին՝ Բեռլինում. գլխաւոր գերում հանդէս եկաւ հոչակաւոր պարունի Աննա Պաւլովնա:

1916ին Թիֆլիսի «Հայոց երաժշտական ընկերութիւնը» հրաւրում է Սպենդիարեանին հեղինակային համերգով, նպատակ ունենալով ծանօթացնելու տեղի հայ հասարակութեանը՝ տաղանդաւոր հայրենակցի ստեղծագործութիւնը:

Համերգը կայացաւ Մարտի 27ին «Օպերա» ին թատրոնի շէնքում: Երգահանը արժանացաւ խանդալառ ընդունելութեան:

Թիֆլիսում Սպենդիարեանը ծանօթանում է հայ մտաւորականութեան ներկայացուցիչների՝ երգահանների, գրողների, նկարիչների հետ: Առանձնակի մտերիմ յարաբերութիւններ է ստեղծում Յովհ: Թումանեանի եւ Նկարիչ Ե: Թաղէսուեանի հետ: Սպենդիարեան ինդրում է մեծ բանաստեղծն՝ օքնել իրեն թատրերգի համար յարմար նիւթ գտնելու հարցում: Թումանեանը նրա համար կարդում եւ թարգմանում է իր «Անոյշ», «Փարվանա» եւ «Թմկարերգի առումը» պոէմները: Տպաւորութիւնը հսկայական էր: Առանձնակի խանդավառութիւն է առաջ բերում «Թմկարերգի առումը». վերջապէս գտնելոց այն գրական երկը, որ լիովին բաւարարում է նրա մտայլացումներին: Նւագահանը ողեւորւած ինդրում է բանաստեղծն՝ պոէմը տրամի վերածել, որպէսզի դրա հիման վրայ դրւի գրոյնը: Բանաստեղծի գուստը, նւարդ թումանեան, գրում է. «Թումանեանի առանձնասեննեակում թախտի վրայ կողք-կողքի նստած կարդում էին պոէմը եւ ողեւորւած աշխատում: Թումանեանը կարդում էր եւ թարգմանում, իսկ Սպենդիարեան հանդիսալ կորցրած, լսում էր թարգմանւած հաւածները, եւ ամէն հաւածից յետոյ տեղից վեր էր կենում, արագ-արագ սենեակի մի ծայրից միւս ծայրն էր զնում եւ իրեն-իրեն խօսում, կարծես ինչ որ մտքեր էին ծնւում, եւ նա ձեւեր էր որոնում:

— Շահէ գահը, վիշապներ, աշուղի երգը: Հիանալի է, հիանալի...

Զանազան բացականչութիւններով նա իր հիացմունքն էր յայտնում... ու նորից զալիս էր նստում թախտին, թումանեանի կողքին<sup>5</sup>:

Սպենդիարեանը մեկնում է Թիֆլիսից՝ թատրերի վրայ աշխատելու վիթխարի ցանկութեամբ: Նոյն թւականի աշնանը նա կրկին զալիս է Թիֆլիս՝ թումանեանի հետ հանդիպելու եւ թատրերգի համար երաժշտական նիւթեր հաւաքելու: Նա լսում ու գրի է առոնում ժողովրդական երգեր, մուղամներ, ձեռք է բերում ժողովրդական երգերի ժողովրդուներ, ձայնապնակներ: Հայ գրողների ընկերութիւնը «Հայոց երաժշտական ընկերութեան» հետ միասին, ի պատիւ երգահանի, յատուկ երաժշտական երեկոյ են կաղմակերպում, ուր ելոյթ են ունենում առանձին մենակատարներ (երգիչներ, քամանչար), «Սայաթ-Նովա» սաղանդարը, սանթուրահարների խումբը, կատարում են ժողովրդական ու աշուղական երգեր, պարսկական մուղամներ, արարական ու քրդական մեղեդիներ: Երեկոյի բացման իր խօսքում թումանեան, դիմելով Սպենդիարեանին՝ ասում է. «Բա-

նասաեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին եւ իր ողեւորութիւններով կենդանութեան շունչ է շնչում նրան, որ նա ապրի մշտագիս . բայց որ նա թռչի, գրա համար նրան թեւեր են հարկաւոր, իսկ թեւեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհում, որ կոչում է երաժշտութիւն: կազիսով դուք գալիս էք Հայոց բանաստեղծների կենդանի գեղարւեստական զործք թեւաւորելու, որ նրանք դառնան հօգօր ու կատարեալ կախարդական գործեր:

Ես, որպէս «Հայ գրողների ընկերութեան» նախագահ, ողջունում եմ ձեր վերաբարձը «Հայ գրողների ընկերութեան» անունից եւ ողջունում եմ ձեզ, որպէս մի հարազատի, որ երկար տարիներ օտարութեան մէջ մնալուց յետոյ՝ վերաբանում է գէպի տուն, դէպի իր հայրենի օջախը, հետը բերելով երաժշտութիւնը, ամէնանուրբն ու ամէնասուրբը, ինչ որ կայ աշխարհում ու կեանքի մէջ»<sup>6</sup>:

Սպենդիարեանն ու Թումանեանը պայմանաւորում են՝ շարունակելու աշխատանքը թատրերգի վրայ յաջորդ ամբանը Սուրբակում՝ նւագահանի ամարանոցում. բայց նրանց այլեւս չիմակեց հանդիպել միմեանց: Թումանեանին չի յաջողւում մեկնել Դրիմ, իսկ յետոյ վրայ են համնում յեղափոխութիւնը, պապ եւ քաղաքացիական կը-ուիմերը, եւ երկահանի ու բանաստեղծի կապերը խզուում են: Սպենդիարեանը ստիպւած դիմում է այդ ժամանակ Դրիմում բնակւող ուսու բանաստեղծուհի Սոֆիա Պարնոկին, որ եւ դառնում է «Ալմաստ» թատրերգի գրքոյի կիրակին հեղինակը:

\* \* \*

Յեղափոխութիւնից յետոյ ընկած տարիները Սպենդիարեանի ըստեղծագործական կեանքին վերջին չըջանն են կազմում, երբ նա գտնուում էր իր տաղանդի ծաղկման զագաթնակիշտում:

Սպենդիարեանն այս շրջանում եւս չզաւաճանեց իր քաղաքացիական սկզբունքներին ևս ընդառաջեց դարաշրջանի պահանջներին:

1917ին Սպենդիարեան գրում է իր սեփական բնագրով, «Փառաբանների», Մայիսի առաջին օր» հիմնը խառն երդչախումբի համար: Աւելի ուշ, եռանգով մասնակցում է ինքնագործ երդչախմբի աշխատանքներին, որոնց համար եւ մշակում է «Դուրինուչկա», «Ընկերներ», համարձակ», «Կարմիր գրօշ» , «Կայ մի ժայռ Վորայում» եւ այլ յեղափոխական երգեր: Երբ Եալթայում բացում է երաժշտական կեղորն, նա ստանձնում է ստեղծագործական զասարանի զեկափառումը, իսկ երբ վերսկսում են Եալթայի համերդային նւազախմբի

աշխատանքները, վերսկսւում են նաև նրա ելոյթները, կարգաւորում հիւրախաղերը Մոսկայում, Պետրոգրադում եւ այլ քաղաքներում:

Սպենդիարեանի գործունէութիւնը նոր իմաստ ու նոր թափ է ստանում Երեւան փոխադրելուց յետոյ (1924ին, Հայաստանի կառավարութեան հրաւէրով): Դա այն ժամանակ էր, երբ Խորհրդային Միութեան ամենատարբեր ծայրերից Հայաստան էին զալիս հայ ժըտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչներից շատերը՝ Աւ. Իսահակեան, Ա. Թամանեան, Մ. Սարեան, Երգահաններ՝ Ռ. Մելիքեան, Ա. Տէր-Գևորգեան, Մ. Մելիքեան, Երաժշտագէտներ՝ Վ. Ղորջանեան, Ա. Աղամեան եւ շատ ու շատ ուրիշներ: Գալիս էին ժըտականութային նոր կեանք ստեղծելու, հայրենիքի վերածնունդը կատարելու:

Երեւանում Սպենդիարեանի հոգում անթեղած նորական սէրը գէպի հարազատ ժողովուրդը՝ նրան մէծ ոյժ եւ եռանդ է հաղորդում՝ յաղթահարելու ամէն մի գժարաւութիւն: Նա նետում է կեանքի յորձանուտը, ունենալով միայն մի նպատակ՝ ծառայել հարազատ ժողովրդին, վերջին ուժերը նորիրաբերել ազդային երաժշտութեան բարդաւաճմանը: Նա ծաւալում է բազմակողմանի գործունէութիւն. ընտըրում է Հայաստանի Գիտութիւնների ու Արեստի ինստիտուտի նախագահութեան եւ Երեւանի պետական երաժշտանոցի խորհրդի պատւաւոր անդամ: Որպէս Հայպետհրատի վարչութեան երաժշտական-խմբազրագական յանձնաժողովի անդամ, նա իրազործում է հայ նուագահանների երկերի հրատարակումը, ծրագրում է անոնց նորիւած շարժումը, որը ճանակութէ մասնակցում է Հայաստանում համերգային նուազախմբի կազմակերպութեան, ապա զինաւորում նրա աշխատանքը: Առաջին բաց համերգը կայանում է 1924 թւականի Դեկտեմբերի 10ին, որի յայտագիրը ամբողջովին կազմւած էր Սպենդիարեանի երկերից: Դեկադարում է ինքը հեղինակը:

Սակայն Սպենդիարեանի գործունէութեան առաւել արժէքաւոր ներգրումը կապւած է նրա զեկավարութեան արեստի հետ:

Ինչպէս Ռ. Մելիքեանն է գրում՝ «Սպենդիարեանի զալուստով Երեւանի երաժշտական կեանքի նոր ժամանակաշրջանը նշանաւորեց եւ համանւազային խմբերդների կազմակերպութով, խթանեց տեղի ուժերի երաժշտական ստեղծագործութեան նոր վերելքը»<sup>7</sup>:

Եթէ նորաստեղծ համերգային նուազախումբը (կազմւած երաժշտանոցի դասառուներից եւ գերազանցապէս ուսանողներից) կարձ ժամանակամիջոցում կարողանում է գեղարեւստական զգալի նուածումների հասնել եւ բարդ ստեղծագործութիւններ կատարել, ապա

7. Կոյն տեղը, էջ 92:

դա՝ չնորդիւ այն բանի, որ առաջին իսկ օրից նոտակալի առջեւ կանդ-նում է փորձւած, բարձր ճաշակի տէր մեծ երաժիշտը:

Սպենդիարեանին մեծ հրճւանք էր պատճառում նորաստեղծ երաժշտական կեանքի ամէն մի երեւոյթ, ամէն մի յաջորդութիւն, իւրաքանչիւր նոր ծիլ, որի մէջ նա տեսնում էր խոստումնալից ապագայ: Այս ամէնին նա արձագանգում է մամուլում, գրում արժէքաւոր յօդւածներ համերդային նաւազախմբի, ժողովրդական գործիքների խմբակի, երաժշտանոցի «Օպերային դասարանի մասին», եւ այլն:

Հայաստանում Սպենդիարեան մեծ հասրաւորութիւն ստացաւ աւելի մօտից ու բազմակողմանի ծանօթանալու ժողովրդի կեանքին, ճանաչելու նրա բնաւորութիւնը, հոգեկան կերտածքը, աւելի խոր ուսումնասիրելու ժողովրդական երաժշտութիւնը: Նա պատեհ առիթը չի կորցնում գրի առնելու ժողովրդական կատարողներից լսած մեղեղիները կամ հետաքրքիր կշուրթաւոր պատկերները, կամ, պարզապէս, առանձին բնորոշ երաժշտական արձածքները: Նրան կարելի էր տեսնել խորասուղաւած ունկնդիրելիս փողոցում երգող մի աշուղի: Նա մեծ յափշտակութեամբ ուսումնասիրում է Կոմիտասի մըշակումները, դրանք նրա համար կատարեալ յայտնութիւն էին: «Կոմիտասը այսուհետեւ կը լինի իմ ուսուցիչների թւում» — ասում է նա:

Երեւանի երաժշտական կեանքից ստացած տպաւորութիւնները ծնունդ տեցին Սայաթ-Նովայի «Ուստի կու դաս» երգի մշակմանը (ձայնի եւ համերդային նաւազախմբի համար) եւ «Երեւանեան էսիւդ-ներին», որ հայկական համերդական երաժշտութեան գոհարներից մէկը հանդիսացաւ:

«Երեւանեան էտիւդներում» թեմաները, ինչպէս ինքը հեղինակն է նշում, երեւանում ժողովրդական երաժշտութերի կողմից կատարաւած հայկական եւ արաբական մեղեղիներն են: Այս ստեղծագործութիւնը բաղկացած է երկու համարից՝ «Ծնղելի» եւ «Հեջաս»: Կառուցւածքի տեսակիտից երկուսն էլ նման են միմեանց: ունեն դանդաղ նախարան եւ պարային մաս: «Ծնղելի»ում կանացի նազելի մենապարին նախրդում է ծաւալուն նախարանը, ուր օդտագործւած է Սայաթ-Նովայի «Դուռն էն զլիսէն» երգի դիւթիչ մեղեղին, որ, սակայն, երդահանի վարպետ ձեռքի տակ նրբերանգուելով, պարագաղ ներդաշնակութեամբ ու արտայայտիչ ենթածայներով, թատանում է մի առանձնակի բանաստեղծական թովչանք: Երկրորդ համարի կրակոտ պարը սկսում է «Հեջաս» մուլամից վեցցւած, թախիծի նուրբ ըլդարշով պարուրւած մի հատւածով:

«Երեւանեան էտիւդներում» Սպենդիարեան օգտագործում է բըներգների զարդացման բոլոր այն սկզբունքներն ու միջոցները, որոնք նա կիրառել էր դեռեւ «Ղրիմի էսքիզներում», բայց այդ բոլորը՝ վարպետութեան աւելի բարձր մակարդակով: Երգահանը, զարմա-

նալի հարազատութեամբ ու նրբութեամբ, բացայայտում է ժողովը՝ դական մեղեդիներում թաքնած հարուստ հնարաւորութիւնները, ըստ առջելով ժողովրդի կենցաղի վառ ու գունեղ պատկերներ։ Երաժշտութիւնն ունկնդրելիս ասես զգում ես հայրենի ընութեան շունչը, տեսնում հայ կնոջ ամօթիւած ու գեղանի շարժումները կամ լսում դուզուկահարին իր դամքաշի հետ թախծանոյշ մեղեդի նւագելիս եւ այլն։

Սպենդիարեանի մատուցած ծառայութիւնները ազգային մշակոյթին՝ բարձր գնահատականի արժանացան թէ կառավարութեան եւ թէ հասարակութեան կողմից։ 1926ի Հոկտեմբերի 3ին Հայաստանի կառավարութիւնը մեծ հանդիսաւորութեամբ նշում է նևագահանի ստեղծադարձական գործունեչութեան 25ամեակը եւ չնորհում նրան Հայաստանի ՍՍՀ ժողովրդական արտիստի կոչում։ Յորելինական տօնախմբութիւնը ժողովրդական պատշաճ շուքով անցկացնելու համար համերգական նւագախմբի կազմը լրացւում է Թիֆլիսից Հրաւերած օպերային թատրոնի նւագախմբի արտիստներով։ Ամսի 4ին եւ 5ին յորելեարը հանդէս է գալիս իր բրկերին նւիրած համերգներով, որոնք հանրապետութեան երաժշտական կեանքի առաւել նշանակալից իրադարձութիւնը հանդիսացան։ Յորելինական համերգներ տեղի են ունենում նաեւ յաջորդ տարում Ռուսովում, Թիֆլիսում (վեց համերգ), Միմֆերոպոլում եւ Մոսկվայում։ Մեծ յաջորդութիւնը ամէնուրեք ուղեցում է երգահանին։

Սպենդիարեանը լի էր նոր նուանդով, յլացած նոր ծրագրերով, երբ անժամանակ մահը՝ 1928ի Մայիսի 7ին կտրեց նրա կեանքի թելը։

\* \* \*

Սպենդիարեանի կեանքին ու գործունէութեան երրորդ ըրջանը գրեթէ ամբողջութեամբ նւիրած է «Ալմաստ» թատրերդին։ Այսուեղի մի են բերում բոլոր այն նւաճումները, որ նա ձեռք էր բերել իր հայնական եւ համերգային գործերում։ Այսպիսով՝ «Ալմաստը» նւագահանի ստեղծադարձական ուղին եղրափակող երկը հանդիսացաւ։

Ինչպէս յայտնի է, թուրմանեանն իր «Թմէկարերդի առումը» պոէմը զբելիս օդուագործել է Թմուկ բերդի կործանման մասին ժողովը դրդի մէջ զահպահնած աւանդները, սակայն պոէտը դէպքերը փոխացրել է 18րդ դարը, վերագրելով դրանք պարսիկ նադիր շահի արշաւանքների ժամանակաշրջանին (30ական թւականներ)։

Պոէմի հիմնական գաղափարը հայրենասիրութիւնն է, որ հաստատում է, մէկ կողմից, զաւթիչների գէմ իշխան Թաթուլի քաջարի դիմագրութեան փառաբանման, միւս կողմից՝ Թմէկատիրուհու փառասիրութիւնն ու դաւաճանութիւնը պարսաւելու միջոցով։

Գործն է անմահ, լաւ իմացէք,  
Որ խօսում է դարէ դար,  
Երնէկ նրան, որ իր գործով  
Կ'ապրի անվերջ, անդաղար:  
Զարն էլ է միշտ ապրում անմեռ,  
Անէծք նրա չար գործին,  
Որդիք լինի, թէ հէրն ու մէր,  
Թէ մուրազով սիրած կին:

Թատրերգի գրքոյկում պահպանւած է Թումանեանի սկզբի եւ հայ-  
րենասիրական ողին եւ փելիստիքայական խորութիւնը, բայց, ի տար-  
բերութիւն դրական սկզբնազրիւրի, այստեղ մեծ զարդացում է ըս-  
տանում իշխանութուն՝ Ալմաստի կերպարը: Սպենդիարեանին հարկա-  
ւոր էր թատրերգում հայ ժողովրդի հայրենասիրական պայքարի հետ  
մէկտեղ պատկերել նաև ուժեղ հոգեբանական տրամա: Այսպիսով,  
ըստ սեպին, «Ալմաստ»ը հայրենասիրական հոգեբանական տրամա է:

Կարճ ծանօթանանք թատրերգին բովանդակութեան: Պարսից Նա-  
դիր շահը քառասուն օր է, ինչ պաշարել է Թմկարերգը, բայց՝ ապ-  
արդիւն: Հայ քաջերը իշխան թաթուլի գլխաւորութեամբ՝ աննկուն  
են: Զայրացած նադիրը խորամանկ չէյխի խորհրդով, ուղարկում է  
իր պալատական երգչին՝ աշուղի կերպարանքով, Ալմաստի մօտ, խոս-  
տանալով նրան իր գահը: Ալմաստը հոգեկան ուժեղ ասլրումներից  
յետոյ անձնատուր է լինում իր փառասիրական զգացումներին եւ հակ-  
ւում գաւաճանութեան: Խնջոյքի ժամանակ հարթեցնելով՝ թաթուլին  
ու զինուրներին, նա ներս է թողնում թշնամուն: Յանկարծակի եկած  
Հայերը կարճ գիմազրութիւնից յետոյ զոհւում են: Նազիր շահը իր  
նպատակին հասնելուց յետոյ, դաւաճան Ալմաստին զահի փոխարչն  
իր հարեմն է առաջարկում: Խարւած ու անարգւած Ալմաստ, զջա-  
լով իր արարքի վրայ, Թաթուլի եւ իր վրէժը լուծեկու համար, դա-  
շոյնով յարձակում է շահի վրայ, բայց շահի թիկնապահները զինա-  
թափ են անում նրան եւ յանձնում դահճին:

«Ալմաստ» թատրերգը բաղկացած է չորս գործողութիւնից, որոնց  
մէջ գերերը, տրամագրական տեսակէտից, բաշխւած են հետեւեալ  
կերպով.

Առաջին գործողութիւնը թշնամու կերպարի ցուցադրումն է: Բա-  
յի այդ, այստեղ նախապատրաստում է տրամա հանգոյցը, տրում է  
իշխան թաթուլի քաջորի կերպարի նախնական ուրւագիծը:

Երկրորդ գործողութիւնը հայ ժողովրդի, Թաթուլի եւ Ալմաստի  
կերպարների ցուցադրումն է: Այստեղ ստեղծում է նաև տրամային  
բախման հանգոյցը:

Երրորդ գործողութիւնը թաթուլի պալատում խնջոյքի տեսա-



ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԻՆՏԻԱՐԵԱՆ, 1910ին

րանն է, որտեղ փառաբանւում են Հայերի յաղթանակը եւ զօրավար թաթուլը: Գործողութեան երկրորդ կէսը պատկերում է Ալմաստի դաւաճանութիւնը եւ Թմկաբերգի առումը: Սա տրամային գործողութեան բախման բարձրակէտն է:

Զորբորդ գործողութիւնը հանգոյցի լուծումն է, թատրերգի գործող անձանց արարքների փիլիսոփայական իմաստաւորումը, որ իրականանում է Ալմաստի եւ Նադիր շահի փոխաղարձ դիմակազերծումը:

Թատրերգում հակադրւում եւ բախմում են Երկու հակառակորդ բանակներ՝ Հայերը եւ Պարսիկները: Սպենդիաբան այս երկու բանակների երաժշտական բնութագրերը ճշմարտացի ձեւով իրականացնելու համար համապատասխանօրէն դիմում է Երկու երաժշտական տարրեր ակունքների՝ Հայկական եւ պարսկական: Ունկնդիրի առջեւ, մէկը-միւսի ետեւից յառնում են դաժան ու փառամոլ Նադիր շահի, խորամանկ շէյխի, երկու իրարամերժ զգացմոնքների մէջ տոցըրտող Ալմաստի, ազնիւ ու խիզախ թաթուլի եւ, վերջապէս, խաղաղասէր, բայց եւ հայրենիքի անկախութեան համար կեանքը չխնայող հայ ժողովրդի կերպարները: Իւրաքանչիւրի համար վարպետ երդահանը գտնում է յարմար միջոցներ արտայայտչութեան:

Նադիր շահ թշնամու բանակը ներկայացնող գլխաւոր դէմքն է, Պարսիկների նւաճողական ձգտումների մարմնաւորողը: Նրա մենախօսութիւնը թատրերգի կարեւորագոյն համարներից մէկն է, ուր անսահման փառասիրութեամբ լցւած Նադիրը՝ յայտնում է Երկրորդ Լենկ-թէմուրը դառնալու, մեծ Մոգովի գահին ու հարստութեանը տիրանալու իր երազանքների մասին: Սրանով չի սահմանափակում թշնամու բնութագրիը: Ճշմարտացի, կենդանի կերպար, եւ ոչ թէ սլիմա սակնդեկու համար, Սպենդիաբանը Նադիրին տալիս է եւ այլ յատկութիւններ: Նադիր շահն ընդունակ է բանաստեղծական ոգեշման, երբ խօսքը գեղեցիկի մասին է: Նա փիլիսոփայ է, եւ խարդախ ճանապարհով ձեռք բերած յաղթանակը նրան գոհացում չի տալիս: Նա խորհում է կեանքի իմաստի, մարդու ձգտումների ունայնութեան մասին: Կերպարի նման բազմաձայնութիւնը պայմանաւորում է նրա երաժշտական լեզվի հարստութիւնը: Երդահանը օգտագործում է արտայայտչական ամենասարբեր միջոցներ, որոնք Նադիրի երաժշռութիւնը դարձնում են մերժ խառաջնունք, մռայլ ու չարագուշակ, մերթ խանդավառ, մերթ հանդապատ:

Թշնամու նւաճողական ձգտումներն ու ուղմատենչ ոգին աւելի հուժկու եւ հոյակապ ձեւով արտայայտում է «Պարսկական քայլերդում»: Հենց այս քայլերդի առանձին դարձածքներն են, որ յետագայում հանդէս են դալիս որպէս թշնամուն բնութագրող թեմաներ: Սպենդիաբան քայլերդի երաժշտական նիւթը հիմնականում վեր-

ցնում է Նեկողայոս Տիգրանեանի մշակած մուլտմիներից. քայլերդի առաջին եւ երրորդ մասում օգտագործւած է «Հէյդարին», իսկ միջին մասում՝ հատածներ «Նովրուզ Արաբուց» եւ Անդրկովկասում տարածւած պարսկական եղանակներից մէկը: Դիմելով ապա երաժշտութեան զարգացման տարրեր սկզբունքների եւ կիրառելով սուրուած համահնչելներ, երդահանը ստեղծում է արշաուզ յորդաների վերին աստիճանի տապաւորիչ պատկերը: «Պարսկական քայլերը» առաջին գործողութեան բարձրակէտն է:

Թշնամու կերպարին սուր կերպով հակադրում է հայ ժողովրդի կերպարը: Յենելով հայ գեղջակական երաժշտութեան վրայ, Սպենդիարեան տալիս է խաղաղասէր հայ ժողովրդի ու նրա շահերի պաշտպան իշխան Թաթուլի նկարագիրները: Նւագահանը երկրորդ ու երրորդ գործողութիւնների ընթացքում, աստիճանաբար, բացայայտում է ժողովրդին յուղող մտքերն ու զգացմունքները: Եթէ երկրորդ գործողութեան մէջ աղջիկների երկու խմբերուներում արտայայտում են նրա վիշտն ու տառապանքները, ապա երրորդ գործողութեան մէջ՝ շեշտում է անսահման նւիրածութիւնը հայրենիքի ու Թաթուլի նըկատմամբ, նրա բուռն հրճանքը տարած մեծ յաղթանակի, տըրտմութիւնը մարտում ընկած հերոսների, հպարտութեան զգացումը Թաթուլի ու նրա զինորների անպարտելիութեան կապակցութեամբ:

Հայ ժողովրդի կերպարը ստեղծելու համար Սպենդիարեան, բացի նրանից, որ օգտագործում է ժողովրդական երաժշտութեան ոճական առանձնայատկութիւնները, գիմում է նաև բուն ժողովրդական մեղեդիներին եւ նրանց վրայ կառուցում խմբերգների մի մասն ու պարերը:

Ժողովուրդը թատրերգում հանդէս է գալիս մէկ որպէս կատարւող դէպքերի մէկնարան, մէկ որպէս դէպքերի անմիջական մասնակից. այստեղից էլ խմբերգների տարրեր գերը որոշ խմբերգներ բացատրում են այն՝ ինչ կատարւում է բեմական գործողութիւնից դուրս, բայց վերաբադրում է նւագահմբում (գրո՞նի պատկերում, դաւաճանութեան տեսարանում), իսկ մեծ մասը արտայայտում է ժողովրդի անմիջական զգացմունքները:

Թատրերգում մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում նաև պարերը: Պարը մէկ կողմից օգտագործում է իր սովորական նշանակութեամբ, որպէս կենցաղի բնութագրման միջոցներից մէկը (աղմկ-ների ու տղաների պարերը երրորդ գործողութեան սկզբում), միւս կողմից՝ հանդէս գալով թատրերական կարեւոր հանգուցակտում, այն նպաստում է տրամինթործողութեան զարգացմանը: Այդպիսին է ռազմիկների պարը, որ նախորդում է դաւաճանութեան տեսարանին: Սկզբում պարը հնչում է խրոստ ու առնական, հիմքում դրւած «Կ'ողբայ եալի» սիրային-կատակային երգի մեղեդին, բայց չորրորդ

կրկնութեան ժամանակ (չորրորդ տարբերակում) պարի կենսահամակ, առոյդ երաժշտութեան մէջ ներմուծում. են սուր եւ լարւած համահնչիւններ, բաղմագոյն «սովախող» ձայներ, որոնց միջոցով ստեղծում է չար, զաղիր գործի անխուսափելիութեան զգացողութիւն: Եւ, իսկապէս, պարին յաջորդող ժաւալուն համերգային պատկերում (երրորդ գործողութեան աւարտը) ստեղծւած տրամային յագեցւած երաժտութեան միջոցով պատկերում է Թմկաբերդի անկման ողբերգական տեսարանը:

Թաթուլք նադիր շահի հակապատկերն է: Սա ամբողջական, վեհ կերպար է, օժտած բարոյական բարձր արժանիքներով. նա զերծ է փասամ ոլութիւնից եւ զինք է վերցնում միայն հայրենիքը պաշտպանելու համար:

Թաթուլք բնմ է զալիս երկրորդ գործողութեան վերջում, իսկ երրորդի վերջում զոհում է: Առերեւոյթ այս հանգամանքը տափթ է տալիս մտածելու, թէ նրա գերը թատրերգի մէջ սահմանափակ է: Սակայն իրականում յայլպէս չէ, որովհետեւ թաթուլի ներկայութիւնը զգացում է գրեթէ ամբողջ գործի ընթացքում: Արդէն առաջին գործողութեան մէջ ունկնդիրը թշնամու բերանից լսում է նրա խիզախութեան եւ անվիշերութեան մասին, երկուրդ գործողութեան ընթացքում նրա մասին հիացմունքով ու սիրով խօսում են Ալմաստն ու աղջկները, վերջապէս, չորրորդ գործողութեան մէջ նրա աղնիւդիմանկարը յառնում է նադիր շահի եւ Ալմաստի զուգերգի ժամանակ, հակաբերելի իր բարոյական բարձր տիպարով, թէ՝ մէկին եւ թէ՝ միւսին: Այսպիսով, Թաթուլի կերպարն անցնում է ողջ թատրերգի միջով եւ մէծ զեր է խազում ստեղծագործութեան հիմնական գաղափարի՝ հայրենասիրութեան բացայալման հարցում. ուստի պատահական չէ, որ թատրերգի երաժշտական տրամադրական կարեւորագոյն բներգներից մէկը Թաթուլի բներգն է: Հարցն այն է, որ երգահանը թաթուլի կերպարը ստեղծելիս, ի առբերութիւն միւս կերպարների, առաւելապէս դիմում է շնորհի՝ շրջապատշաճների վերաբերութեան միջոցով բնութագրման մեթոսին: Թաթուլի անմիջական նկարագիրը տրաւում է գործը նկարագրող համերգային պատկերում, դրան յաջորդող յաղթական վերադարձում եւ մեներգում (երրորդ գործողութիւն): Այս համարներից առաւել կարեւոր դեր ունի համերգային պատկերը, ուր երգահանը բարդ փոխ-յարաբերութիւնների միջոցով զարգացնելով Պարսիկների, հայ ժողովրդի, Թաթուլի թեմաները, ստեղծում է թեժ մարտի տեսարան, որն աւարտում է Հայերի յաղթանակով:

Թաթուլի թեման նոյնպէս վերցւած է ժողովրդական երաժշտութիւնից. դա «Ալագեազ աշերդ» քնարական երգի ջերմաշունչ, յուղապատ մեղեդին է, որ կերպարի զարգացման հետ զուգընթաց՝

վերիմաստաւորւում է, հնչելով մեղմ ու փափուկ կամ առնական ու կամային:

«Ալմաստ» թատրերգի հոգեբանական գիծն ամբողջովին կապւում է Ալմաստի բարդ կերպարի հետ: Ալմաստը զանւում է երկու իրար հակասող զգացմունքների իշխանութեան ներքոյ. մէկ կողմից սէրը թաթուլի նկատմամբ, միւս կողմից անսահման փառասիրութիւնը հանգստութիւն չեն տալիս նրան: Այս երկու զգացմունքների բախումը գոյորդում է նրա ներաշխարհը ամենատարբեր յոյզերով ու ապրումներով: Զար նախազգացման տաղնապ, սիրոյ բուռն զեղումներ, թագուհի դառնալու բաղձանք, վշալի մորմոք, երբ մտովին պատկերում է աւերած յայրենիքը, ատելութեան ու ցաման պոռթկում նենդ նադիր շահի հետ հանդիպելիս, վրիժառութեան անչափ եւ այլն, եւ այլն: Այս ամենը յաջորդելով միմեանց՝ հազորդում է Ալմաստին բնութագրով երաժշտութեանը ներքին մեծ լարածութիւն եւ արամագրութիւնների հարուստ երանդներ: Երգահանը Ալմաստի բնմական կերպարին համապատասխան ստեղծում է երաժշտական երկու թեմա՝ սիրոյ եւ փառասիրութեան:

Ալմաստի գերերգի համարներն են արիան եւ մեներգը (երկրորդ գործողութիւն), պարը (երրորդ գործողութիւն) եւ նրա կերպարի զարդացման բարձրակիւլ հանդիսացող երկրորդ արիան ու զուզերը նադիր շահի հետ (չորրորդ գործողութիւն):

Ալմաստի հոգեկան բարդ աշխարհը բացայայտելու համար Սպենդիարեանն օգտագործում է եւ քնարական երկայլն մեղեդիներ, եւ խոռլայոյզ լայնաչունչ հատւածներ, հիմնամծ խօսքի շեշտաւորումի վրայ եւ խստաշունչ կամ յուզական արտասանութիւններ: Բարդ է նաև Ալմաստի գերերգի ձայնաւորումի համակարգը: Այն ստեղծըւում է ինչպէս Հայերին, այնպէս էլ Պարսիկներին բնորոշող մեղեդային զարձաւածքների զուզորդման ու փոխ-ներթափահանցման միջոցով: Ի գէպ, կապը Պարսիկների երաժշտական լեզւի հետ առանձնակի շեշտով ի յայտ է զալիս Ալմաստի կողմից դաւաճանութեան որոշումն ընդունելուց յետոյ, այսինքն՝ պարում: Սպենդիարեան այստեղ զիմում է պարի հոգեբանացման սկզբունքին. Ալմաստն իր հոգեկան լարածութիւնը պարզելու համար՝ մոլեգնօրէն պարում է: Երեքմասնեայ կառուցւածք ունեցող այս համարում Սպենդիարեան մէկ կողմից բացայայտում է զաւաճանի հոգելիքակը (առաջին եւ երրորդ մասեր), միւս կողմից՝ ստեղծում է կենցազային մի զըրւագ, չնորհչւ այն բանի, որ միջին մասում օգտագործել է պարն իր բուռն նշանակութեամբ: Ալմաստի պարը հետաքրքիր է եւ իր երաժշտական լեզւով: Այն մասերը, որոնք արտայայտում են նրա հոգեկան ապրումները, կապւած են թշնամու երաժշտական բնութագրման համար, այսինքն, յատկապէս առաջին մասում, անցնում են բո-



ԱՆԹՈՎԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ, Յկար Մարտիրոս Սարեանի

լոր այն թեմաները, որոնք կապւած են հերոսուհու իշխանատենչ ձգուումների հետ՝ փառասիրութեան եւ Նադիր շահի թեմաները, ինչպէս նաև Հատուածներ նրա մենախօսութիւնից ու աշուղի մեներգից։ Միջին մասը կառուցւած է հայկական երեք պարերի՝ «Քեանդըրբազ», «Վարդ կօշկւ»։ «Ճաւալի» մեղեդիների վրայ (այս մեղեդիները նոյնպէս վերցւած են Ն. Տիգրանեանի մշակումներից)։

Չորրորդ գործողութեան մէջ Ալբանակ երաժշտական լեզուն կըրկին կապւում է հայկական երանակային յարմարցումների հետ, երբ յուսախարաւած Ալմաստը, որին Նադիր շահը դահի փոխարէն իր հարմն է առաջարկում, – մտքով ու զգացմունքներով վերադառնում է Թաթուլին։ Սակայն վերջում, չարագուշակ ու սկաւոր հնչյող «Զանդիլումը» (առաջին արիոպյից) կարծես մերժում է այդ վերադարձը եւ կանխադրուչակում հերոսուհու անխուսափելի վախճանը։

Կանդ առնենք «Ալմաստ» թատրերգի եւս մի քանի ստեղծագործական սկզբունքների վրայ։

Երգամասը մեծ մասամբ հիմնած է խօսքի արտասանական ելեւէջների վրայ։ Դրա չնորհիւ երաժշտութիւնը աւելի սերտ է շաղկապւում բնագրի հետ եւ հնարաւորութիւն ընձեռում զգացմունքներն ու յոյզերը բացայայտել աստիճանական զարդացման մէջ, ընդէժելով տրամադրութեան երանզների փոփոխումը, նրանց նրբին անցքերը։ Սակայն մեծ տեղ տալով արտասանական ոճին ու միջանցիկ զարգացում ունեցող ձեւերին (մեներգ, արիա, գուգերգ), երգահանը չի հրաժարում լայնաշունչ մեղեդայնութիւնից եւ կենցաղում առաւել տարածւած՝ երգի տեսակից։ Թատրերգում զոյութիւն ունեցող այդպիսի օրինակներից առանձնակի ուշադրութեան են արժանի յատկապէս աղջիկների երկու խմբերուները եւ աշուղի երգը։ Առաջիններում երգահանը օգտագործել է ժողովրդական մեղեդիներ (իւրաքանչիւրում երկուական) եւ ստեղծել թատրերգի ամենանուրը բանաստեղծական էջները։ Իսկ երկրորդում, նա, յենելով աշուղական երգին բնորոշ առանձնայատիւնների վրայ, ստեղծում է ոճական տեսակէտից վերին աստիճանի հարազատ, գեղարեստականութեան տեսակէտից անզուգական երաժշտութիւն։ Այս համարը թատրերգի կառոյցքին մէջ կարեւոր գեր է խաղում։ Հէ՛ որ աշուղն է պղտորում Ալմաստի հողին՝ ներդրծելով իր գեղեցիկ երգով նրա սրտի, իսկ դայթակղիչ խոստումներով՝ նաև մտքի վրայ։

«Ալմաստ» թատրերգում հանդիպում ենք բաւական քանակութեամբ ժողովրդական մեղեդիների։ Երգահանը, յէնուելով իր ձայնական եւ համերդային երկերում մեռք բերած փորձի վրայ, ժողովրդական մեղեդիներն օգտագործել է տարրեր ձեւով՝ կամ առանց փոփոխութեան, երբ նազակցութեան տարրերակման չնորհիւ մեղեդին նոր երանզներ է ձեռք բերում (աղջիկների խմբերգերը, եր-

բորդ գործողութեան առաջին երկու պարերը, եւ այլն), կամ համերդային մեծ զարգացման միջոցով, երբ մեղեդին մասնատում է ու մշակում, կամ պահպանելով մեղեդու հնչական պատկերը՝ փոխում է նրա չափն ու կշռոյթը եւ դրա չնորհիւ ստեղծում է նոր կերպար («Առնա երբը» Թաթուլի յաղթական վերադարձում, «Կողբայ եալին» ռազմիկների պարում, եւ այլն):

Նւայախմբի հսկայական դերը թատրերդում երեւան է դավիս տարբեր միջոցներով: Նախ թատրերգի գաղափարի գրսեւորման հարցում մեծ նշանակութիւն ունեն առանձին համերգային հատածները, ինչպիսիք են «Պարսկական քայլերդը», «Թաթուլի յաղթական վերադարձը», «Գրուը», երրորդ գործողութեան նախաբանը, պարերը եւ, վերջապէս, թատրերգի դրամատիկական բարձրակէտը՝ դաւաճանութեան տեսարանը: Թատրերգը տակալին աւարտած չէր, երբ այս համարներն արդէն հնչում էին համերգներում:

Նւադախմբի դերը թատրերդում չափազանց մեծ է երաժշտութեան միջանցիկ, համերգային լարւած զարգացում ստեղծելու գործում: Դրան զգալիօրէն նպաստում են լեյտուրանիմերը (կերպարները բնութագրող թեմաներ), որոնք զուգորդելով կամ հակադրւելով միմեւանց, վիճակնիւ զարգացում ստանալով, օգնում են երաժշտութեան մէջ առաւել ցայտուն ու ուղիելիք պատկերելու բեմական գործողութիւնը, կարեւոր իրադարձութիւնները, բացայայտելու գործող անձանց հոգեկան աշխարհը: Եւ, վերջապէս, չնորհիւ առանձին համարների (մեներդ, զուկերդ, արիսոյ եւ այլն) միջն ստեղծւած նւադախմբային անցումների՝ պահովում է թատրերգի երաժշտութեան անընդմէջ հոսքը:

«Ալմաստ» թատրերգը իր ստեղծագործական սկզբունքներով գըտնըւում է յետ-վագներեան՝ շրջանի (19րդ դարի վերջը եւ 20րդ դարը) արևտոտի պահանջների մակարդակին վրայ:

Այդ են վկայում երգամասում գերիշող եղանակային-արտասահան ոճը, նւադախմբի հսկայական դերը, երաժշտութեան համերգային լարւած զարգացումը, խումբերու բացակայութիւնը եւ այլն:

«Ալմաստ» թատրերգը առաջին անգամ բեմադրւեց 1930ի Յունիսի 30ին, Մոսկուայի Մեծ թատրոնի մասնաճիւղում: Ներկայացումն ան-

8. Սպենդիարեան այդ հատածներից կազմէլ էր երկու համերգային սիլիտս «Պարսկասահանի շահ Նադիրը եւ հայ իշխան թաթուլը» եւ «Ծննջոք թաթուլի պատուին», իրադախնիւրը բարձրացած չորս համարից: Խոկ գաւաճանութեան տեսարանն առանձնացրել է որպէս ինֆուլույն համերգային պատկեր:
9. Ռիխարդ Վագներ (1813-1886) գերմանական խոշորագոյն երգահան, որն իր բարենորդումով հսկայական դեր խաղաց թատրերգի յետագայ զարգացման գործում:

ցաւ մեծ յաջողութեամբ: Երգահան Ս. Վասիլենկոն իր յիշողութիւններում դրում է. «Ընքնատիպ, թարմ երաժշտութիւնը, հետաքրքիր նիւթը, հիանալի հնչող նւազախումբը անմիջապէս ստեղծեցին այդ թատրերդի հսկայական յաջողութիւնն ու համբաւը... Բացի այդ, թատրերդը ցոյց տւեց, թէ ինչպիսի դանձեր է թաքցնում իր մէջ ժողովրդական երաժշտութիւնը, այն էլ այնպիսի երկրի, ինչպիսին Հայաստանն է»<sup>10</sup>:

«Ալմաստը»ը բեմադրւեց 1930ին նաեւ Օդեսայում, 1932ին Թիֆլիսում եւ 1953ին Տաշքենդում: Երեւանում 1933ի Յունւարի 20ին այդ թատրերդի բեմադրութեամբ բացւեց «Օպերա»յին թատրոնը: 1939ին Մոսկվայում կայակալիք Հայկական արևստի տասնօրեակի կապակցութեամբ՝ թատրերդը վերստին բեմադրւեց որոշ լրացումներով եւ արժանացաւ Մոսկվայի երաժշտասէր հասարակութեան բարձր գնահատանքին:

\* \* \*

Սպենդիարեանի ստեղծագործական ժառանգութիւնը հայ երաժշտութեան լաւագոյն նւաճումներին է պատկանում: Նրա աւանդնելը, առանձնապէս Համերգային երաժշտութեան եւ թատրերդի բնադրաւառում, մեծ նշանակութիւն ունեցած սովորակայ երաժշտութեան զարդացման համար: Ժողովրդական եւ համաշխարհային դասական երաժշտութեան իոր ուսումնասիրութիւնը, կապը ժամանակի առաջաւոր դադարակների հետ, անկաշառ սէրը գէպի ժողովուրդը ու ձգոսումը՝ ծառայելու նրա շահերին, հնարաւորութիւն ընձեռեցին նւազահանին կերտելու բովանդակութեամբ նշանակալից, կերպարներով հարուստ, բարձր արևստի պահանջները գոհացնող երկեր, որոնք ճանաչւած են թէ՛ Սովորական Միութեան մէջ եւ թէ՛ նրա սահմաններից դուրս:

ԱՆՆԱ ԲԱՐՍԱՄՆՅԱՆ

10. Ժամանակիցները Ալ. Սպենդիարեանի մասին, էջ 17: